Ընդունվել է՝
06/30/20
Բրոթման/Դիվայն
Բոլորը՝ կողմ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-92

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ COVID- 19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՎՏԱՐՄԱՆ ԴԵՄ ԱՐԳԵԼՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի

սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 18-ին Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի կողմից տրվել է թիվ 3 հանրային կարգադրությունը, որով սահմանվել է մորատորիում՝ արգելելով վտարել ցանկացած բնակելի և առևտրային տարածքների վարձակալներին, որոնք չեն կարողանում վճարել վարձավճարը՝ COVID-19-ի հետ կապված պատճառով, և այս հրամանը 2020 թ. մարտի 24-ին փոփոխվեց, վավերացվեց և երկարաձգվեց Քաղաքային խորհրդի կողմից և վտարման մորատորիումի վերաբերյալ ավելացվեց 14-օրյա գրավոր ծանուցումը; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 27-ին Նահանգապետը հրապարակեց N-37-20 գործադիր հրամանը, որով երկարացվեց բնակելի տարածքների վարձակալի վտարման վերաբերյալ բողոքին պատասխանելու ժամանակը, եթե վարձակալը գրավոր տեղեկացնում է տանտիրոջը, որ ի վիճակի չէ վճարել վարձավճարը COVID-19-ի պատճառով՝ վարձավճարի վճարման օրվանից առաջ կամ ոչ ուշ, քան դրանից յոթ օր անց: Ըստ Նահանգապետի հրամանի՝ վարձակալը պարտավոր է տանտիրոջը տրամադրել COVID-19-ի հետ կապված պատճառաբանությամբ փաստաթղթերը միայն ժամկետանց վարձավճարի վճարման ժամանակ, որն իրավական ուժով փոխարինում է Քաղաքապետարանի 14-օրյա գրավոր ծանուցման պահանջին, և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 6-ին Կալիֆորնիայի դատական խորհուրդը՝ նահանգային դատարանների վարչական լիազոր մարմինը, հրապարակեց արտակարգ հրաման, որով արգելում է վտարման գործողությունների համար դատական ծանուցագրի ներկայացումը՝ նահանգապետի կողմից COVID-19 համավարակի հետ կապված արտակարգ դրության վերացումից հետո մինչև 90 օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքի, երբ վտարումն անհրաժեշտ է առողջության և անվտանգության համար, ինչպես նաև, առնվազն 60 օրվա ընթացքում, եթե շարունակվում է նախկինում գոյություն ունեցող դեպքերի գործողությունը; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 8-ին, Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը թողարկել է թիվ 6 հանրային հրամանը, որը փոփոխել է վտարման մորատորիումի հրամանները ՝ դրանք ենթակա դարձնելով նահանգապետի գործադիր հրամանին՝ բնակելի տարածքներից վտարումների վերաբերյալ, և Կալիֆորնիայի դատական խորհրդի հրամանին՝ հետաձգելով վտարման գործընթացները և նաև արգելելով տանտերերին գանձել կամ պահանջել ուշացած վճարման տույժեր, տուգանքներ կամ չվճարված վարձավճարների տոկոսներ կամ փորձել որևէ հետապնդող գործողություն կատարել հետաձգված վարձավճարները ստանալու համար; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. ապրիլի 14-ին Քաղաքային խորհուրդը թիվ 20-41 որոշմամբ վավերացրեց և երկարաձգեց թիվ 6 հանրային հրամանի գործողության ժամկետը՝ երկարաձգելով վտարման մորատորիումի հետվճարման ժամկետը 6 ամսից մինչև 12 ամիս և երկարաձգեց վտարման մորատորիումի հանրային հրամանի գործողության ժամկետը մինչև 2020 թ. մայիսի 31-ը, և 2020 թվականի մայիսի 12-ին թիվ 20-53 Որոշմամբ այն կրկին երկարաձգեց մինչև 2020 թվականի հունիսի 30-ը;

Հաշվի առնելով, որ Կալիֆորնիայի նահանգը և Լոս Անջելեսի վարչաշրջանն աստիճանաբար մեղմացնում են «Տանը մնալու» և «Տանը, աշխատավայրում և համայնքում ավելի ապահով» լինելու վերաբերյալ հրամանների սահմանափակումները, որոնք արգելում են անհատներին այցելել այնպիսի բիզնես հաստատություններ, ինչպիսիք են՝ մանրածախ և ռեստորանային հաստատություններ, բարեր, գինեգործարաններ և գարեջրագործարաններ, ֆիթնեսի սրահներ և անձնական խնամքի հաստատություններ;

Հաշվի առնելով, որ չնայած «Տանը, աշխատավայրում և համայնքում ավելի ապահով» լինելու վերաբերյալ հրամանների աստիճանական մեղմացմանը, այնուամենայնիվ, շատ ձեռնարկություններ շարունակում են զգալ եկամուտների զգալի կորուստներ՝ բիզնեսների փակման կամ սահմանափակումների պատճառով, ժամերի կամ աշխատավարձերի կորստի կամ COVID-19-ի հետ կապված աշխատատեղերի կրճատման արդյունքում՝ խոչընդոտելով նրանց՝ վարձավճարները վճարելու ունակությանը՝ դրանով իսկ նրանց խոցելի դարձնելով վտարման համար, **և**

Հաշվի առնելով, որ վտանգի նման պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում նախնական որոշումների և հասարակական հրամանների ժամկետները երկարաձգելը և լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ

ԲԱԺԻՆ 1. Թիվ 20-53 Որոշումը, որը վերաբերում է բնակելի տարածքներից վտարման արգելքի մասին արտակարգ իրավիճակների հանրային հրամանին, սույնով ընդլայնվում է հետևյալ կերպ.

Վտարման արգելք (մորատորիում) բնակելի տների վարձակալության վերաբերյալ: Այս աննախադեպ արտակարգ դրության պայմաններում Գլենդելի բնակիչներին օգնություն և պաշտպանություն ապահովելու համար բնակելի վարձակալությունների վտարման արգելքի գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ ճանաչվում է անվավեր համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն

որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից սույն թվականի հունիսի 30-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-92 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի հունիսի 30-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան
Դեմ՝ Չկա
Բացակա՝ Չկա
Ձեռնպահ՝ Չկա

City Clerk

Ընդունվել է՝
06/30/20
Նաջարյան/Բրոթման
Բոլորը՝ կողմ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-93

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ՝ COVID- 19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ; ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի

սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 24-ին Քաղաքային խորհուրդը թիվ 20-33 որոշմամբ երկարաձգեց նախորդ կարգադրությունները մինչև 2020 թ. ապրիլի 30-ը, և ըստ Կոստա-Հոքինսի՝ վարձակալությամբ տրվող տների մասին օրենքի՝ վարձավճարի բարձրացման սառեցումից չազատված ցանկացած վարձակալական միավորի (նախքան 1995 թ. փետրվարի 1-ը կառուցված միավորներ, առանձնատներ և անհատական համատիրության շենքեր) վրա սահմանեց վարձավճարի բարձրացման սառեցում; և

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մարտի 25-ին Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը հրապարակեց թիվ 5 հանրային հրամանը, որով նախատեսում է, որ վարձավճարի բարձրացման սառեցման հրամանը կիրառվի վարձավճարների բարձրացումը կանգնեցնելու համար, անկախ այն բանից, թե նախկինում երբ է ներկայացվել վարձավճարի բարձրացման ծանուցումը, և որ յուրաքանչյուր տանտեր, ով ցանկանում է բարձրացնել վարձավճարը պետք է այդ մասին նոր ծանուցում ներկայացնի՝ այս հրամանի գործողության ժամկետի ավարտից հետո;

Հաշվի առնելով, որ 2020 թվականի ապրիլի 14-ին Քաղաքային խորհուրդը թիվ 20-41 որոշմամբ վավերացրեց վարձավճարի բարձրացման սառեցման վերաբերյալ թիվ 5 հրամանը և երկարաձգեց բոլոր հանրային հրամանները մինչև 2020 թվականի մայիսի 15-ը, և և 2020 թվականի մայիսի 12-ին թիվ 20-56 Որոշմամբ, քաղաքային խորհուրդը երկարաձգեց այն մինչև 2020 թվականի հունիսի 30-ը.

Հաշվի առնելով, որ չնայած «Տանը, աշխատավայրում և համայնքում ավելի ապահով» լինելու վերաբերյալ հրամանների աստիճանական մեղմացմանը, այնուամենայնիվ, շատ ձեռնարկություններ դեռ շարունակում են զգալ եկամուտների զգալի կորուստներ՝ բիզնեսների փակման կամ սահմանափակումների պատճառով, ժամերի կամ աշխատավարձերի կորստի կամ COVID-19-ի հետ կապված աշխատատեղերի կրճատման արդյունքում՝ խոչընդոտելով նրանց՝ վարձավճարները վճարելու ունակությանը և ծայրահեղ դժվար դարձնելով վարձավճարների թանկացումը վճարելը; և

Հաշվի առնելով, որ վտանգի նման պայմանները շարունակում են գոյություն ունենալ, և անհրաժեշտ են դարձնում նախնական որոշումների և հանրային հրամանների ժամկետները երկարաձգելը և լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկումը՝ հանրային առողջության և անվտանգության պահպանման համար:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ

ԲԱԺԻՆ 1. Թիվ 56 Որոշման գործողության ժամկետը, որը վերաբերում

է արտակարգ դրության հանրային հրամաններին՝ բնակելի տարածքների վարձավճարների բարձրացման դադարեցման վերաբերյալ, սույնով երկարաձգվում է մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդել քաղաքի խորհրդի կողմից սույն թվականի հունիսի 30-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Mayor

ATTEST:

City Clerk

APPROVED AS TO FORM

CITY ATTORNEY

DATE 6/30/2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-93 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի հունիսի 30-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան

Դեմ՝ Չկա

Բացակա՝ Չկա

Ձեռնպահ՝ Չկա

Արամ Աճեմյան /Քաղաքային խորհրդի քարտուղար/

-

Ընդունվել է՝
06/30/20
Դիվայն/Նաջարյան
Բոլորը՝ կողմ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-94

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ՝ COVID- 19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԿՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ; ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ կորոնավիրուսի տարածումը նվազեցնելու նպատակով Կալիֆորնիա նահանգի, Լոս Անջելեսի վարչաշրջանի և Գլենդել քաղաքի քաղաքացիների ձեռնարկած ջանքերը վերջին մի քանի ամիսների ընթացքում պսակվել են բավարար հաջողությամբ, Վարչաշրջանի առողջապահության պաշտոնակատարը շարունակում է թույլատրել զգուշորեն,

աստիճանական վերադարձը՝ ավելի շատ բիզնեսների, սոցիալական և այլ գործունեությունների համար; և

Հաշվի առնելով, որ քաղաքում վերաբացման այս լրացուցիչ բաղադրիչներն ավելացնելով՝ մարդիկ ավելի շատ են շփվելու միմյանց հետ՝ ստեղծելով ռիսկ, որ վիրուսի փոխանցումը կավելանա, և ամենաուժեղ պաշտպանություններից մեկը, որը մենք՝ որպես հասարակություն, կարող ենք իրականացնել, քանի դեռ շարունակում ենք ավելի շատ անձամբ շփվել միմյանց հետ, դա դիմակների ավելի շատ օգտագործումն է; և

Հաշվի առնելով, որ հիմնարար գիտական ապացույցները ցույց են տալիս, որ երբ դիմակ կրելը զուգորդում ենք ֆիզիկական հեռավորության պահպանման և առողջության և անվտանգության այլ գործելակերպերի հետ, ինչպիսիք են՝ ձեռքերը լվանալը և մակերեսների կանոնավոր ախտահանումը, ապա լրացուցիչ գործողությունները կարելի է վերսկսել հնարավորինս անվտանգ ձևով, և քանի որ մենք հավաքականորեն ավելի շատ ենք գտնվում համայնքում, պետք է համապատասխանաբար ավելացնենք այն քայլերը, որոնք ձեռնարկում ենք՝ մեզ շրջապատողներին պաշտպանելու համար: Դրանով մենք պաշտպանում ենք ոչ միայն մեր համայնքի անդամներին, այլև, ի վերջո, ինքներս մեզ և մեր հարազատներին, հատկապես նրանց, ովքեր տարիքի կամ առողջական խնդիրների պատճառով խոցելի խմբում են գտնվում; և

Հաշվի առնելով, որ, երբ հանրության շրջանում մարդիկ, ընդհանուր առմամբ, կրում են դիմակներ, ապա քաղաքն ավելի լավ է կարողանում շարունակել վերաբացել բիզնեսները և ավելի անվտանգ կերպով վերսկսել գործունեությունը՝ ի շահ բոլորի, և այդ պատճառով, դիմակներ կրելու վերաբերյալ հասարակական կարգը վերանայվում է՝ ընդհանուր առմամբ լուծելու գործունեությունների ավելացման փոփոխությունները:

Հաշվի առնելով, որ ներկայումս Լոս Անջելեսի շրջանի և Կալիֆորնիայի նահանգի հանրային առողջության պահպանման պաշտոնյաները պահանջում են դրսում՝ հանրության մեջ գտնվելիս, դեմքի պաշտպանիչ միջոցներ կրել՝ սահմանափակ բացառություններով.

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ

ԲԱԺԻՆ 1. Արտակարգ իրավիճակների հանրային հրամանը, որը պահանջում է դեմքի պաշտպանիչ միջոցների օգտագործումը, ինչպես հաստատված է թիվ 20-41 և 20-62 Որոշումներով, սույնով երկարաձգվում է մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախտման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր

հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից 2020 թվականի հունիսի 30-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Mayor

City Clerk

APPROVED AS TO FORM

CITY ATTORNEY

DATE 6/30/2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ
ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-94 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի հունիսի 30-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան
Դեմ՝ Չկա
Բացակա՝ Չկա
Ձեռնպահ՝ Չկա

City Clerk

Ընդունվել է՝
06/30/20
Դիվայն/Նաջարյան
Բոլորը՝ կողմ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-95

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ԲԱՑՕԹՅԱ ՃԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ՝ COVID- 19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ; ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդել քաղաքի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն: Դրա անհրաժեշտությունն առաջացել էր Կորոնավիրուս 2019 (COVID-19) հիվանդության նկատմամբ աճող մտահոգությունից՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով: Վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ: Հաստատված դեպքերի քանակը կարճ ժամանակահատվածում շարունակել է կտրուկ աճել: Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնը (CDC) տեղեկացնում է, որ COVID-19-ը հեշտությամբ տարածվում է մարդուց մարդ, և մշակել է ուղեցույցներ՝ առաջարկելով, որ հասարակությունն ընդունի այնպիսի քաղաքականություն և սահմանված կարգեր, որ հնարավոր լինի պահպանել սոցիալական հեռավորություն: Բացի այդ, 2020 թ. մարտի 16-ին քաղաքային խորհուրդը կարգադրեց նաև փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա;

Հաշվի առնելով, որ Գլենդելի քաղաքապետարանը վերստին կրկնապատկել է իր ջանքերը՝ ձեռքերի հիգիենայի, շնչառական կանոնների և սոցիալական հեռավորության պահպանման ուղղությամբ: Չափազանց կարևոր է, որ մենք՝ որպես քաղաք, անենք հնարավոր ամեն ինչ՝ դանդաղեցնելու հիվանդության տարածման տեմպերը համայնքներում և խուսափելու մեր բժշկական համակարգի անհարկի ծանրաբեռնվածությունից: Մեր ջանքերին նպաստելու նպատակով՝ արտակարգ դրության պայմաններում Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի լիազորության ներքո, Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի համաձայն, այդպիսի արտակարգ իրավիճակների հետևանքով կյանքի և սեփականության պաշտպանության հետ կապված հարցերի շուրջ կանոնակարգեր և կարգադրություններ կազմելու և արձակելու նպատակով կարգադրվում է մի շարք ժամանակավոր սահմանափակումներ կիրառել Գլենդել քաղաքի որոշ հաստատությունների վրա, որտեղ սովորաբար մեծ թվով մարդիկ են հավաքվում և միմյանց հետ սերտ հարևանությամբ են գտնվում;

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ

իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին, և Գլենդելի քաղաքային խորհուրդը ընդունեց թիվ 20-29 Որոշումը, որը համապատասխանում է Նահանգապետի «Տանն ավելի ապահով է» հրամաններին, որով դադարեցին ռեստորաններում ճաշելու բոլոր ծառայությունները, բացառությամբ՝ առաքման և պատվերը հաճախորդների հետ տանելու ծառայությունների,

Հաշվի առնելով, որ ռեստորանների, բարերի, գիշերային ակումբների և այլնի վերաբերյալ 2020 թվականի մայիսի 15-ի Գլենդելի թիվ 20-29 Որոշման գործողության ժամկետը սպառվել է, և նշված բիզնեսները և գործունեության տեսակները շարունակվում են կարգավորվել Վարչաշրջանի «Տանն ավելի անվտանգ է» հրամանով,

Հաշվի առնելով, որ 2020 թ. մայիսի 26-ին կամ մոտ այդ օրերին «Տանն ավելի անվտանգ է» հրամանը վերանայվել է՝ ապահովելու ռեստորանների մասնակի վերաբացումը՝ ներսում ճաշելու ծառայությունների և մանրածախ խանութների համար ներսում գնումներ կատարելու համար՝ պայմանով, որ դրանք բավարարեն վարչաշրջանի որոշ արարողակարգեր;

Հաշվի առնելով, որ Գլենդելի քաղաքապետարանը քայլեր է ձեռնարկում տեղական տնտեսությանը ուղղակի օժանդակություն առաջարկելու համար՝ ի պատասխան COVID-19-ի ներկայացրած տնտեսական ազդեցությունների՝ ձևավորելով «Բիզնեսի վերականգնման աշխատանքային խումբ» և հանդիպելով ավելի քան 40 շահագրգիռ կողմերի հետ, որոնք ներկայացնում են Գլենդելում արդյունաբերության կարևոր բնագավառներ, ներառյալ՝ մանրածախ, հյուրընկալության, գրասենյակային և առողջապահության ոլորտները;

Հաշվի առնելով, որ աշխատանքային խմբի անդամները տեղական բիզնեսին աջակցելու եղանակները հաշվի առնելիս առաջարկությունների թվում ներառեցին «Ալ Ֆրեսկո» ծրագրի իրականացումը՝ ըստ որի բացվում են մասնավոր կայանատեղիները, փողոցային կայանատեղիները և մայթերը՝ լրացուցիչ բացօթյա ճաշելու տեղերով, և ապագա հնարավոր մանրածախ գործունեության համար («Ալ Ֆրեսկոյի» ծրագիր); և

Հաշվի առնելով, որ «Ալ Ֆրեսկո» ծրագրի իրականացումը ձեռնտու կլինի քաղաքի բիզնեսներին և բնակիչներին՝ օժանդակելով ռեստորաններին ընդլայնել բացօթյա ճաշելու տեղերը՝ տնտեսական վերականգնումն արագացնելու նպատակով, մինչդեռ Վարչաշրջանն աստիճանաբար իրականացնում է իր «Աշխատավայրերում և համայնքում անվտանգ վերաբացման» հրամանները;

Հաշվի առնելով, որ Գլենդեյլի քաղաքային օրենսգրքի 2.84-րդ գլխի համաձայն տրված լիազորության համաձայն՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը «Ալ ֆրեսկո/բացօթյա» ծրագրին աջակցելու համար հրապարակեց արտակարգ իրավիճակի հրաման,

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ

ԲԱԺԻՆ 1. Սույնով վավերացվում է թիվ 10 արտակարգ իրավիճակների հանրային հրամանը և գործում է մինչև 2020 թվականի օգոստոսի 31-ը:

A. Այն բիզնեսները, որոնք փոփոխում են իրենց բիզնեսի գործառնությունները՝ ի պատասխան COVID-19-ի, և պահանջում են ժամանակավոր զբաղեցման վկայականի թույլտվություն՝ այդ գործողությունների նպատակով փոփոխությունները կատարելու համար, ազատվում են տեղական արտակարգ իրավիճակների ժամանակահատվածում իրականացվող ժամանակավոր օգտագործման համար թույլտվության վճարներից, երբ դա անհրաժեշտ է՝ հետևյալ կերպով.

- **Զբաղեցման թույլտվության ժամանակավոր վկայական. անհրաժեշտ է բացօթյա ճաշելու նպատակով մասնավոր ավտոկայանատեղերի օգտագործման դիմումների համար**: Նվազագույն վճարը $166 է՝ մեկ ժամվա համար: Սովորաբար գանձվում է 3-ից 4 ժամվա համար:
    - Նշում. Վճարից ազատվում են այն բիզնեսները, որոնք դիմում են ազատման համար՝ COVID-19-ի պատճառով տուժելու հետևանքով:(Օրինակ՝ այլ դիմորդները, որոնք դիմում են դրսում ճաշելուց բացի այլ գործունեության ժամանակավոր վկայականի համար, ենթակա են կիրառվող վճարին):
    - Թույլտվության ժամկետն ինքնաբերաբար լրանում է 2020 թվականի դեկտեմբերի 31-ին:

- **Թույլտվություն, որն անհրաժեշտ է մայթեզրերի հատվածում սնվելու և մայթեզրի ավելացված հատվածի համար (փողոցում առկա կայանատեղի համար):** Վճարը $233 է՝ գումարած տարեկան լիցենզիայի վճարը՝ $ 2.23՝ մեկ քառակուսի ֆուտի համար:
    - Վճարից ազատվում են այն բիզնեսները, որոնք դիմում են ազատման համար՝ COVID-19-ի պատճառով տուժելու հետևանքով:
    - Թույլտվության ժամկետն ինքնաբերաբար լրանում է 2020 թվականի դեկտեմբերի 31-ին:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝

ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից 2020 թվականի հունիսի 30-ին:

Վրեժ Աղաջանյան
/Քաղաքապետ/

Mayor

City Clerk

APPROVED AS TO FORM

CITY ATTORNEY

DATE 6/30/2020

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ
ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ 20-95 Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի հունիսի 30-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ **Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան**
Դեմ՝ Չկա
Բացակա՝ Չկա
Ձեռնպահ՝ Չկա

City Clerk

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

ԶԵԿՈՒՅՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ՕՐԱԿԱՐԳԻ ԱՌԱՐԿԱ

Զեկույց՝ COVID-19 թարմացումներ; Առևտրային և բնակելի տարածքներից վտարման մորատորիումների, վարձավճարների բարձրացման սառեցման և դիմակներ կրելու մասին հանրային հրամանների երկարաձգման կամ փոփոխության շուրջ դիտարկումներ

1. Առևտրային տարածքներից վտարման մորատորիումի վերաբերյալ հանրային հրամանի փոփոխության/երկարաձգման վերաբերյալ որոշում:

2. Բնակելի տարածքներից վտարման մորատորիումի վերաբերյալ հանրային հրամանի փոփոխության/երկարաձգման վերաբերյալ որոշում:

3. Բնակելի տարածքների վարձավճարների բարձրացման սառեցման վերաբերյալ հանրային հրամանի փոփոխության/երկարաձգման վերաբերյալ որոշում:

4. Դիմակներ կրելու վերաբերյալ հանրային հրամանի փոփոխության/երկարաձգման վերաբերյալ որոշում:

5. «Ալ Ֆրեսկո/բացօթյա ճաշելու» ծրագրի թույլտվության հետ կապված՝ վճարներից ազատման վերաբերյալ հանրային հրամանը վավերացնելու մասին որոշում:

ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Տեսակը՝ Գործողություն

Հաստատված է՝ հունիսի 30, 2020 թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ում կողմից է ներկայացվել՝
Michael J. Garcia՝ Քաղաքի դատախազ

Yasmin K. Beers՝ Քաղաքի մենեջեր

Ում կողմից է պատրաստվել՝
Michael J. Garcia՝ Քաղաքի դատախազ

Ում կողմից է վերանայվել՝
Michele Flynn՝ Ֆինանսների տնօրեն
Roubik R. Golanian՝ Քաղաքի մենեջերի օգնական
Michael J. Garcia՝ Քաղաքի դատախազ

Ում կողմից է հաստատվել՝
Yasmin K. Beers՝ Քաղաքի մենեջեր

ԱՌԱՋԱՐԿ

Առաջարկվում է, որ Խորհուրդը ստանա COVID-19-ի շուրջ թարմացումներ և քննարկի՝ արդյո՞ք փոփոխել կամ երկարաձգել բնակելի և առևտրային տարածքներից վտարումներին, բնակելի տարածքների վարձավճարների բարձրացման սառեցմանը և դիմակներին վերաբերող հանրային հրամանները: Առաջարկվում է նաև, որ Խորհուրդը վավերացնի արտակարգ իրավիճակների ծառայությունների տնօրենի հրապարակած հանրային հրամանը, որով այն ռեստորանային բիզնեսները, որոնք փոփոխում են իրենց բիզնեսի գործառնությունները՝ ներառելու լրացուցիչ բացօթյա ճաշելու տեղեր՝ ի պատասխան COVID-19-ի, ազատվում են ժամանակավոր զբաղեցման վկայականի և մայթեզրերի հատվածում ճաշելու թույլտվության վճարներից։

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ/ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քանի որ 2020 թվականի մարտի 16-ին Քաղաքապետարանը հայտարարեց արտակարգ դրություն՝ ի պատասխան COVID-19 աննախադեպ համավարակի, Քաղաքապետարանը ձեռնարկել է մի շարք գործողություններ՝ բնակիչների կյանքի, ունեցվածքի և հանրային առողջության և անվտանգության պաշտպանության համար, ներառյալ՝ կարգավորող գործողություններ, տնտեսական զարգացման ուղղությամբ գործողություններ և վարձակալների պաշտպանության և աջակցության գործողություններ՝ բնակիչներին և բիզնեսին օգնելու համար: Կարգավորող գործողությունները ներառում են.

- Արտակարգ դրության հայտարարություն
- Բնակելի տարածքներից վտարման մորատորիումի իրագործում, որը գործում է մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:
- Առևտրական տարածքներից վտարման մորատորիումի իրագործում, որը

գործում է մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:

- Բնակելի տարածքների վարձավճարների բարձրացման սառեցման իրագործում, որը գործում է մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:

- Արտակարգ իրավիճակների հրամանը, որը պահանջում է անհատներից իրենց բնակավայրը լքելիս կրել դիմակներ, որը գործում է մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:

Բացի այդ, քաղաքային խորհուրդն իրականացրել է տնտեսական զարգացման մի շարք գործողություններ, որոնց նպատակը տեղական այն բիզնեսներին ռեսուրսներ կամ ֆինանսական օժանդակություն տրամադրելն է, որոնք տնտեսապես տուժել են COVID-19- ի հետևանքներից: 2020 թ.-ի մայիսի 19-ին Խորհուրդը 2020-21 ֆինանսական տարվա բյուջեի մեջ ներառեց մի շարք տնտեսական զարգացման և բիզնեսի վերականգնման ծրագրերի ֆինանսավորումը՝ «Միջոցառում S» ֆինանսավորումից, ներառյալ՝ Փոքր բիզնեսի վերականգնման և օժանդակության ծրագրեր, Անհատական պաշտպանության միջոցների (PPE) դրամաշնորհներ, Արվեստի աջակցման ծրագիրը, երեխաների խնամքի աջակցությունը և արտակարգ իրավիճակների վերականգնման հասանելիության բարելավմանն ուղղված աջակցություն: Այդ կապակցությամբ՝ Քաղաքապետարանը վերջերս հայտարարեց դրամաշնորհային երեք ծրագրերի մասին, որոնք ընդհանուր առմամբ կազմում են $2,75 միլիոն՝ որպես COVID-19-ի վերականգնման ֆոնդեր՝ բիզնեսի և բնակիչների համար. (1) Արտակարգ իրավիճակների վարձակալության աջակցության ծրագիր ($572,500՝ CDBG-CV-ից) ՝ առաջարկելով առավելագույնը մինչև $1,500 օգնություն՝ ցածր եկամուտ ունեցող Գլենդելում վարձակալությամբ ապրող բնակիչներին; (2) Ցածր եկամուտ ունեցող փոքր բիզնեսի դրամաշնորհային ծրագիր ($572,500՝ CDBG-CV- ից), որը կտրամադրի $5,000 դրամաշնորհ՝ COVID-19- ի հետևանքով տուժած մինչև 114 ոչ էական նշանակության ոլորտների բիզնեսներին և ռեստորաններին՝ օգնելու բիզնեսի ծախսերին և ցածր եկամուտ ունեցող աշխատակիցներին աշխատանքից ազատելուց խուսափելու նպատակով; և (3) Փոքր բիզնեսի վերականգնման դրամաշնորհ ($1,600,000 ՝«Glendale Measure S» ծրագրից), որը $5,000 կտրամադրի 320 բիզնես ընկերություններին, որոնք ունեն 500 և ավելի քիչ աշխատողներ:

<u>Վտարման և վարձավճարների բարձրացման սառեցման վերաբերյալ արտակարգ իրավիճակների հասարակական հրամանների փոփոխությունը /գործողության ժամկետի երկարացումը</u>

Ինչպես նշվեց վերևում, բնակելի և առևտրային տարածքներից վտարումների և

բնակելի տարածքների վարձավճարների սառեցման վերաբերյալ հանրային հրամանների գործողության ժամկետը կավարտվի 2020 թ.-ի հունիսի 30-ին: Մորատորիումների և վարձավճարների սառեցման գործողության ժամկետի վերաբերյալ որոշումները ներառված են, եթե Խորհուրդը կցանկանա երկարացնել դրանց ժամկետները: Աշխատակազմը որևէ առաջարկ չունի այս հրամանների ժամկետների երկարացման վերաբերյալ:

Համեմատության համար՝ ստորև բերված աղյուսակում ներկայացված են որոշ հետազոտական տվյալներ՝ վտարման մորորատորիումների և վարձավճարների բարձրացման սառեցման ժամկետի ավարտի վերաբերյալ՝ որոշ իրավական շրջաններից.

Իրավական շրջան	**Վտարման մորատորիում**	**Վարձի սառեցում**
Բրրբանք	Հուլիսի 31, 2020թ.	Սառեցում չկա
Քալվեր սիթի	8/31/2020թ. կամ տեղական արտակարգ դրության ավարտին (որը, որ ավելի վաղ տեղի կունենա)	Սառեցում չկա
Լոս Անջելես քաղաք	Բնակելի տարածքները՝ տեղական արտակարգ դրության ընթացքում և դրանից հետո 12 ամիս։ Առևտրական տարածքները՝ տեղական արտակարգ դրության ընթացքում և դրանից հետո 3 ամիս։	Արտակարգ դրության ավարտից հետո՝ 1 տարի, եթե չհաստատվի HCIDLA-ի կողմից
Լոս Անջելեսի վարչաշրջան	Հունիսի 30, 2020թ.	Հունիսի 30, 2020 թ.
Փասադենա	Տեղական արտակարգ դրության կամ տեղական հանրային առողջության արտակարգ դրության ավարտին	Սառեցում չկա
Սանտա Մոնիկա	Հուլիս 31, 2021 թ.	Սառեցում չկա
Կալիֆորնիայի Դատական Խորհուրդ	Նահանգապետի կողմից արտակարգ դրության վերացման հայտարարությունից հետո մինչև 90 օր, կամ՝ մինչև Դատական խորհրդի կողմից այն փոփոխելը կամ չեղյալ հայտարարելը:	Սառեցում չկա

Դիմակներ կրելու մասին հրաման

Բնակավայրը լքելիս դիմակներ կրելու պահանջի մասին հանրային հրամանի գործողության ժամկետը նույնպես լրանում է 2020 թվականի հունիսի 30-ին: Դիմակներ կրելու մասին քաղաքապետարանի վերջին հրամանը կցվում է՝ որպես Հավելված 1:

2020 թվականի հունիսի 18-ի վարչաշրջանի փոփոխված « Տանը և աշխատավայրում ավելի ապահով» լինելու մասին հրամանը պահաջում է, որ՝

«Բոլորը պետք է քիթը և բերանը ծածկող դիմակ/դեմքի պաշտպանիչ միջոց կրեն, երբ լքում են իրենց բնակության վայրը և գտնվում են կամ կարող են շփման մեջ գտնվել այլ անձանց հետ, կամ քայլում կամ անցնում են այլ անձանց մոտակայքով, որոնք իրենց տնային տնտեսության անդամ չեն հանդիսանում՝ մասնավոր և հանրային վայրերում ՝ լինի դա ներսում թե դրսում»:

Կալիֆորնիայի նահանգը նաև իրագործել է համանահանգային «ուղեցույց» (Հավելված 2), որն անհատներից պահանջում է կրել դեմքի պաշտպանիչ միջոցներ/դիմակներ՝ հետևյալ դեպքերում՝

- Ցանկացած փակ հասարակական տարածքի ներսում կամ մուտքի մոտ հերթ կանգնելիս;
- Առողջապահության ոլորտի ծառայություններ ստանալիս՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով թվարկված վայրերում՝ հիվանդանոց, դեղատուն, բժշկական կլինիկա, լաբորատորիա, բժշկի կամ ատամնաբույժի գրասենյակ, անասնաբուժական կլինիկա կամ արյան բանկ;
- Հասարակական տրանսպորտի, տարափոխադրման միջոցի, տաքսիի կամ անձնական մեքենայի ծառայության կամ ճանապարհը կիսող մեքենայի մեջ կամ այդ միջոցին սպասելիս;
- Աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանք կատարելիս, երբ.
    - Անհատական շփում կա հասարակության ցանկացած անդամի հետ;
    - Հասարակության անդամների կողմից այցելած որևէ տարածքում աշխատելիս, անկախ այն հանգամանքից, թե հասարակության որևէ անդամ ներկա է այդ պահին, թե ոչ;
    - Ցանկացած վայրում աշխատելիս, որտեղ սնունդ է պատրաստվում կամ փաթեթավորվում՝ վաճառքի կամ այլ անձանց բաշխելու

համար;
    - Ընդհանուր տարածքներում աշխատելիս կամ շրջելիս, ինչպիսիք են՝ միջանցքները, սանդուղքները, վերելակները և կայանատեղիները;
    - Ցանկացած սենյակում կամ փակ տարածքում, որտեղ այլ անձինք են ներկա (բացառությամբ անձի սեփական տան կամ բնակության վայրի անդամների), երբ հնարավոր չէ ֆիզիկական հեռավորություն պահպանել։
- Ցանկացած հասարակական տրանսպորտ, տարափոխադրման միջոց, տաքսի կամ անձնական մեքենայի ծառայություն կամ ճանապարհը կիսող մեքենա վարելիս կամ շահագործելիս, երբ կան ուղևորներ։ Երբ ուղևորներ չկան, նույնպես խորհուրդ է տրվում կրել դեմքի պաշտպանիչ միջոցներ։
- Դրսում՝ հասարակական վայրերում գտնվելու դեպքում, երբ նույն տնային տնտեսության կամ բնակության վայրի անդամ չհանդիսացող անձանցից 6 ոտնաչափ հեռավորություն պահելը հնարավոր չէ:

Նահանգի, Լոս Անջելեսի վարչաշրջանի և Գլենդել քաղաքի՝ դեմքի պաշտպանիչ միջոցներ կրելու մասին հրամանների համեմատությունը, ներառյալ՝ կիրառումը և բացառությունները կցված է՝ որպես Հավելված 3։

Խորհուրդը կարող է երկարացնել Քաղաքի՝ դեմքի պաշտպանիչ միջոցներ կրելու մասին հրամանի գործողության ժամկետը կամ՝ ապավինել նահանգի և Լոս Անջելեսի վարչաշրջանի հրամաններին: Եթե Խորհուրդը երկարացնի հրամանի ժամկետը, ապա խորհուրդ է տրվում այն երկարացնել արտակարգ դրության իրավիճակի տևողության համար։ Հանգամանքներից ելնելով՝ Խորհուրդը կամ արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը իրավասու կլինեն ավելի վաղ դադարեցնել հրամանը:

<u>Բացօթյա ճաշելու թույլտվության վճարներից ազատում («Ալ ֆրեսկո»)</u>

Որպես Քաղաքապետաանի՝ բիզնեսի վերականգնման ռազմավարության մի մաս՝ Խորհուրդը հանձնարարեց անձնակազմին իրականացնել «Ալ Ֆրեսկո Գլենդելի» ծրագիրը՝ լրացուցիչ բացօթյա ճաշելու վայրեր մշակելու համար՝ մասնավոր կայանատեղերում, փողոցի կայանատեղերում և մայթեզրի այն տարածքներում, որտեղ հետիոտների և հաճախորդների համար կարող է պահպանվել համապատասխան սոցիալական հեռավորություն: Որպես ծրագրի մաս՝ Խորհուրդը համաձայնեց անձնակազմի առաջարկություններին, որ ծրագրի օգտագործումը

խթանելու համար՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը հրապարակի հանրային հրաման՝ բացօթյա ճաշելու թույլտվության վճարներից ազատման վերաբերյալ: 2020 թվականի հունիսի 16-ին տնօրենը հրապարակեց Արտակարգ իրավիճակի հանրային հրամանը (թիվ 2020-10)՝ ազատելով նշված վճարներից մինչև 2020 թվականի օգոստոսի 31-ը: Համաձայն Գլենդելի քաղաքային օրենսգրքի՝ անձնակազմը ձգտում է Խորհրդի կողմից Արտակարգ իրավիճակի հանրային հրամանի վավերացմանը:

ՖԻՍԿԱԼԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատակազմի գնահատմամբ՝ «Ալ Ֆրեսկո» ծրագրի իրականացման համար բացօթյա ճաշելու թույլտվության հետ կապված վճարներից ազատելը կկազմի մոտավորապես $44,000 ֆիսկալային ազդեցություն՝ օգնություն տրամադրելով 50 բիզնես ընկերություններին՝ հետևյալ հաշվարկների հիման վրա.

1,000 քառակուսի ֆուտ կայանատեղի համար մայթեզրի հատվածն օգտագործող ձեռնարկությունները

- $233 թույլտվության վճար x $2.23/քառակուսի ֆուտ
- Ձեռնարկությունները պետք է կիսեն կայանատեղի համար մայթեզրի հատվածը՝ օգտագործելով յուրաքանչյուրի համար 500 քառակուսի ֆուտ
- Մոտ 15 ձեռնարկություններ կօգտագործեն կայանատեղի համար մայթեզրի հատվածը
- Յուրաքանչյուր ձեռնարկության համար միջին վճարը կազմում է $1,348
- Կայանատեղի համար մայթեզրի հատվածն օգտագործող 15 ձեռնարկությունների համար թույլտվության վճարներից ազատման ընդհանուր գումարը կկազմի մոտ $20,220:

Մայթեզրի ավելացված հատվածն օգտագործելու թույլտվություն հայցող ձեռնարկությունները

- $233 թույլտվության վճար x $2.23/ քառակուսի ֆուտ
- Հաշվարկվում է մոտ 250 քառակուսի ֆուտ բացօթյա ճաշելու տարածք/բիզնեսի վայր
- Մոտ 15 ձեռնարկություններ կօգտագործեն ավելացված հատվածն օգտագործելու թույլտվությունը
- Յուրաքանչյուր ձեռնարկության համար միջին վճարը կազմում է $790
- Մայթեզրի ավելացված հատվածն օգտագործելու համար 15 ձեռնարկությունների թույլտվության վճարներից ազատման ընդհանուր գումարը կկազմի մոտ $11,857:

Զբաղեցման թույլտվության ժամանակավոր վկայական օգտագործող ձեռնարկությունները

- Վկայականի վճարը կազմում է $166/ժամը
- Հաշվարկվում է մոտ 3.5 ժամ/թույլտվություն
- Մոտ 20 ձեռնարկություններ կօգտագործեն թույլտվությունը
- Յուրաքանչյուր ձեռնարկության համար միջին վճարը կազմում է $581
- Մասնավոր կայանատեղի օգտագործող 20 ձեռնարկությունների թույլտվության վճարներից ազատման ընդհանուր գումարը կկազմի մոտ $11,620:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

1. Խորհուրդը կարող է փոփոխել կամ երկարացնել հանրային հրամանները, որոնք վերաբերում են բնակելի և առևտրային տարածքներից վտարումների մորատորիումներին, բնակելի տարածքի վարձավճարի սառեցմանը և դեմքի պաշտպանիչ միջոցներ կրելուն:

2. Խորհուրդը կարող է որոշում կայացնել չփոփոխել կամ երկարաձգել բնակելի և առևտրային վտարման մորատորիումների, բնակելի տարածքի վարձավճարի սառեցման և դեմքի պաշտպանիչ միջոցներ կրելու հետ կապված հանրային հրամանները՝ թույլ տալով դրանց ժամկետը լրանալ 2020 թվականի հունիսի 30-ին:

3. Խորհուրդը կարող է ընտրել այլընտրանքային տարբերակ, որն անձնակազմը չի մշակել:

ՔԱՂՈՔԱՐՇԱՎԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Կիրառելի չէ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Որոշում թիվ 20-62 `դեմքի պաշտպանիչ միջոցներ կրելու հրամանի վերաբերյալ

2. Կալիֆորնիա նահանգի ուղեցույց՝ դեմքի պաշտպանիչ միջոցներ օգտագործելու վերաբերյալ

3. Կալիֆորնիայի նահանգի, Լոս Անջելեսի վարչաշրջանի և Գլենդել քաղաքի՝ դեմքի պաշտպանիչ միջոցներ կրելու մասին պահանջները համեմատող աղյուսակ:

DocuSign Envelope ID: A10C12C0-E73D-47F2-902D-A2FBCEFS871C

Հավելված 1

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ_____

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ՈՐՈՎ ՏՐՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ COVID-19-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԴԵՄՔԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԿՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ; ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվի առնելով, որ միջազգային, ազգային, նահանգային և տեղական առողջապահական և կառավարական մարմիններն արձագանքում են շնչառական հիվանդության բռնկման հետևանքներին, որն առաջացել է Կորոնավիրուս 2019 (COVID-19)՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով, և վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 4-ին Կալիֆորնիա նահանգի նահանգապետը հայտարարեց արտակարգ դրություն՝ լրացուցիչ ռեսուրսները մատչելի դարձնելու, նահանգային բազմաթիվ գործակալություններում և գերատեսչություններում արդեն իսկ սկսված արտակարգ իրավիճակի գործողությունները պաշտոնական դարձնելու և նահանգում COVID-19-ի ավելի լայն տարածմանը նախապատրաստվելուն օգնելու նպատակով; և

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 13-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը հայտարարեց ազգային արտակարգ իրավիճակ և հայտարարեց, որ դաշնային կառավարությունը մատչելի կդարձնի արտակարգ իրավիճակների ֆինանսավորումը, որպեսզի աջակցի նահանգային և տեղական իշխանություններին՝ կանխելու COVID-19- ի տարածումը և անդրադառնալու դրա հետևանքներին; և

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդելի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն և կարգադրեց փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա; և

Հաշվի առնելով, որ կորոնավիրուսի տարածումը նվազեցնելու նպատակով Կալիֆորնիա նահանգի, Լոս Անջելեսի վարչաշրջանի և Գլենդել քաղաքի քաղաքացիների ձեռնարկած ջանքերը վերջին մի քանի ամիսների ընթացքում պսակվել են բավարար հաջողությամբ, Վարչաշրջանի առողջապահության պաշտոնակատարը շարունակում է թույլատրել զգուշորեն, աստիճանական վերադարձը՝ ավելի շատ բիզնեսների, սոցիալական և այլ գործունեությունների համար; և

Հաշվի առնելով, որ քաղաքում վերաբացման այս լրացուցիչ բաղադրիչներն ավելացնելով՝ մարդիկ ավելի շատ են շփվելու միմյանց հետ՝ ստեղծելով ռիսկ, որ վիրուսի փոխանցումը կավելանա, և ամենաուժեղ պաշտպանություններից մեկը, որը մենք՝ որպես հասարակություն, կարող ենք իրականացնել, քանի դեռ շարունակում ենք ավելի շատ անձամբ շփվել միմյանց հետ, դա դիմակների ավելի շատ օգտագործումն է; և

Հաշվի առնելով, որ հիմնարար գիտական ապացույցները ցույց են տալիս, որ երբ դիմակ կրելը զուգորդում ենք ֆիզիկական հեռավորության պահպանման և առողջության և անվտանգության այլ գործելակերպերի հետ, ինչպիսիք են՝ ձեռքերը լվանալը և մակերեսների կանոնավոր ախտահանումը, ապա լրացուցիչ գործողությունները կարելի է վերսկսել հնարավորինս անվտանգ ձևով, և քանի որ մենք հավաքականորեն ավելի շատ ենք գտնվում համայնքում, պետք է համապատասխանաբար ավելացնենք այն քայլերը, որոնք ձեռնարկում ենք՝ մեզ շրջապատողներին պաշտպանելու համար: Դրանով մենք պաշտպանում ենք ոչ միայն մեր համայնքի անդամներին, այլև, ի վերջո, ինքներս մեզ և մեր հարազատներին, հատկապես նրանց, ովքեր տարիքի կամ առողջական խնդիրների պատճառով խոցելի խմբում են գտնվում; և

Հաշվի առնելով, որ, երբ հանրության շրջանում մարդիկ, ընդհանուր առմամբ, կրում են դիմակներ, ապա քաղաքն ավելի լավ է կարողանում շարունակել վերաբացել բիզնեսները և ավելի անվտանգ կերպով վերսկսել գործունեությունը՝ ի շահ բոլորի, և այդ պատճառով, դիմակներ կրելու վերաբերյալ հասարակական կարգը վերանայվում է՝ ընդհանուր առմամբ լուծելու գործունեությունների ավելացման փոփոխությունները:

ԳԼԵՆԴԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ

ԲԱԺԻՆ 1. Սույն Հրամանն ուժի մեջ կմտնի հունիսի 3-ին՝ ժամը 11:59-ին, և կշարունակվի ուժի մեջ մնալ մինչև 2020 թվականի հունիսի 30-ը, և այն վերանայում և փոխարինում է թիվ 20-55 Որոշումը:

A. Ինչպես օգտագործվում է սույն Հրամանում, «Դիմակը» նշանակում է կտորից, գործվածքից կամ փափուկ կամ թափանցիկ այլ նյութից պատրաստված դեմքը ծածկող միջոց՝ առանց անցքերի, որը ծածկում է միայն քիթը և բերանը և դեմքի ստորին հատվածը: Այն դիմակը, որը թաքցնում է այն կրողի աչքերը կամ ճակատը, չի համարվում պատշաճ դիմակ: Դիմակի օրինակները ներառում են շարֆը կամ բանդանան, պարանոցի փաթաթանը, վերնաշապիկից, շապիկից կամ սրբիչից տան պայմաններում պատրաստված դեմքի ծածկող միջոցը, որն ամրացվում է ռետինե ժապավենով կամ այլ կերպ, կամ դիմակ, որը պարտադիր չէ, որ բժշկական լինի: Դիմակը կարող է լինել գործարանային, կամ կարող է ձեռագործ լինել և հանպատրաստից կարված լինել սովորական կենցաղային իրերից: Դիմակը պետք է լինի հարմարավետ, այնպես, որ օգտագործողը կարողանա շնչել քթով և ստիպված չլինի այն հաճախակի կարգավորել, որպեսզի խուսափի դեմքը շոշափելուց: Այն դիմակները, որոնք մեկանգամյա օգտագործումից հետո դեն չեն նետվում, անհրաժեշտ է հաճախակի լվանալ, և հարկավոր է ունենան լրացուցիչ դիմակ, որպեսզի կրելու համար մաքուր դիմակը միշտ հասանելի լինի: Դիմակը լվանալու վերաբերյալ

տեղեկատվությունը հասանելի է CDC-ի կայքում՝ https://www.cdc.gov/coronavirus/2019- ncov/prevent-getting-sick/how-to-wash-cloth-face-coverings.html:

Քանի դեռ բժշկական կարգի դիմակների քանակը քիչ է, ինչպիսիք են՝ N95 դիմակները և վիրաբուժական դիմակները, հասարակության անդամները չպետք է գնեն այդ տեսակի դիմակներ՝ սույն Հրամանի համաձայն կրելու համար. այդ բժշկական դիմակները պետք է վերապահվեն բուժաշխատողների և շտապ արձագանքման աշխատակիցների համար:

Ցանկացած դիմակ, որը ներառում է միակողմանի փական (սովորաբար այն բարձրացված պլաստիկ գլան է՝ մեկ քառորդ չափով, դիմակի առջևի կամ կողմի հատվածում), որը նախատեսված է հեշտ արտաշնչելու համար, թույլ է տալիս կաթիլներին դուրս գալ դիմակից՝ վտանգելով մոտակայքում գտնվողներին: Արդյունքում, այս դիմակները սույն Հրամանի նախատեսված կարգով չեն համարվում դեմքի պաշտպանիչ միջոցներ և չպետք է օգտագործվեն սույն Հրամանի պահանջներին համապատասխան:

Դիմակ պատրաստելու մասին տեսանյութը և այն կրելու և լվանալու մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել CDC կայքում՝ https://www.cdc.gov/coronavirus/2019- ncov/prevent-getting-sick/diy-cloth-face- coverings.html:

B. Քաղաքում գտնվող յուրաքանչյուր անձ մշտապես պետք է դիմակ կրի, երբ դուրս է գալիս տնից, բնակելի միավորից կամ այլ բնակավայրից (երբ գտնվում է «Բնակավայրից դուրս»), բացառությամբ հետևյալ դեպքերի.

1. Մինչև 2 տարեկան երեխաները (ներառյալ նորածինները) չպետք է կրեն դեմքը ծածկող միջոցներ: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է կրեն դրանք, սակայն գտնվեն մեծահասակների հսկողության ներքո, որպեսզի համոզվեն, որ երեխան կարող է անվտանգ շնչել և խուսափել խեղդվելուց կամ շնչահեղձ լինելուց: Շնչառական խնդիրներ ունեցող երեխաները չպետք է կրեն դեմքը ծածկող միջոցներ: Հաշմանդամության որոշ տեսակներ ունեցող անձինք, զբաղվելով թույլատրելի գործունեությամբ, ազատվում են դիմակներ կրելու պահանջից, եթե պահպանում են սոցիալական հեռավորության պահանջները և հետևում են բոլոր նահանգային հրահանգներին և Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության արարողակարգերին, որոնք հասանելի են ներբեռնելու համար այստեղ՝ http://www.lapublichealth.org/media/Coronavirus/docs/HOO/HO_Order_COVID-19_Safer_at_Work_and_in_the_Community_05292020_FI

NAL_WithAppendices.pdf: Համապատասխան ձեռնարկությունների համար (i) արարողակարգերի ծանուցումը պետք է տեղադրված լինի հաստատության մուտքի մոտ կամ մոտակայքում, որպեսզի այն հեշտությամբ տեսանելի լինի հանրության և աշխատողների կողմից, և (ii) արարողակարգերի կրկնօրինակները պետք է տրամադրվեն հաստատությունում աշխատող յուրաքանչյուր աշխատողի, և (iii) ձեռնարկությունը պետք է, ըստ պահանջի, արարողակարգերի իրագործման մասին ապացույցներ ներկայացնի սույն Հրամանն իրականացնող ցանկացած լիազոր մարմնին:

2. Անձը կարիք չունի դիմակ կրելու, երբ (i) միայնակ է կամ գտնվում է միայն իր տան կամ բնակելի միավորի անդամների հետ՝ որևէ շենքում կամ փակ տարածքում, օրինակ՝ աշխատանքի ժամանակ, (ii) վեց ոտնաչափ տարածության վրա ուրիշ ոչ ոք չկա, և (iii) հավանական չէ, որ մյուսները՝ գործընկերները, հաճախորդները, շինարարական աշխատանքներ իրականացնող անձնակազմը կամ հասարակության անդամները հաջորդ մի քանի օրվա ընթացքում մի քանի րոպեից ավել կգտնվեն նույն տարածքում: Դիմակը պետք է կրել, եթե անձը աշխատում է կամ զբաղվում է այնպիսի գործունեությամբ, երբ ուրիշները պարբերաբար ներկա են, նույնիսկ եթե այդ ժամանակ անձը միայնակ է՝ մակերեսները վարակելու ռիսկի պատճառով, որին շուտով կարող են դիպչել մյուսները: Չսահմանափակվելով հետևյալ օրինակով՝ դիմակը պետք է կրել, եթե անձը գործընկերների հետ կիսում է նույն գրասեղանը կամ առանձին գրասենյակը՝ այլընտրանքային ժամանակացույցով, կամ գտնվում է այնպիսի տարածքում, որտեղ համօգտագործվում են այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են՝ գործիքներ, պարագաներ, պատճենահանման սարքեր կամ համակարգիչներ: Դիմակ պետք է կրեն նաև հետևյալ անձինք՝ սանտեխնիկները, ուսուցիչները, խնամքի օգնականները կամ մաքրուհիները, ովքեր այցելում են այլ անձանց տներ կամ բնակավայր՝ աշխատանք կատարելու համար, և յուրաքանչյուր ոք, ով այնտեղ է ապրում, այցելուի ներկայությամբ նույնպես պետք է դիմակ կրի:

Դիմակ հարկավոր չէ կրել, երբ անձը միայնակ է մասնավոր գրասենյակում կամ տարածքում, որը չի համօգտագործվում մյուսների կողմից, և հավանականություն չկա այդտեղ այցելելու՝ առանց նախազգուշացման, սակայն եթե մեկ այլ անձ մուտք է գործում անմիջական տարածք և, հավանաբար, կմնա

մոտակայքում, երկուսն էլ շփման տեղության ընթացքում պետք է դիմակ կրեն:

Եվ յուրաքանչյուր ոք, ով պատրաստում է սնունդ կամ այլ իրեր՝ վաճառքի կամ այլ անձանց մատակարարելու համար, պարտավոր է դրանք պատրաստելիս մշտապես դիմակ կրել, անգամ եթե միայնակ է կատարում այդ գործողությունը:

3. Տրանսպորտային միջոցով միայնակ կամ բացառապես միևնույն ընտանիքի կամ բնակելի միավորի անդամների հետ ճանապարհորդող անձինք կարիք չունեն դիմակ կրել, եթե նրանք որևէ պատճառով չեն իջեցնում մեքենայի պատուհանները, օրինակ՝ արագ արձագանքման աշխատակիցների, սննդի ծառայության աշխատակիցների կամ իրենց տան անդամներից բացի այլ անձանց հետ հետ հաղորդակցվելու նպատակով:

4. Անձը կարող է դիմակ չկրել, երբ կարող է ապացուցել, որ աշխատելիս դիմակ կրելը կարող է ռիսկի ենթարկել այդ աշխատանքի հետ կապված անձին՝ ըստ տեղական, նահանգային, դաշնային կարգադրիչների որոշման կամ աշխատավայրի անվտանգության ցուցումների: Դիմակ չպետք է կրի նաև այն անձը, ով խնդիրներ ունի շնչելու հետ կամ անգիտակից վիճակում է, անաշխատունակ է կամ այլ կերպ չի կարող հեռացնել դիմակը՝ առանց օգնության: Անձը կարող է դիմակ չկրել, երբ դրսում աշխատելիս դիմակ կրելը վտանգ է առաջացնում անձի համար, քանի որ աշխատանքը պահանջում է էական ֆիզիկական ջանքի գործադրում, օրինակ՝ օրվա զգալի մասը կանգնած լինելը և քայլելը, և, եթե հանրության համար մուտքը կարող է սահմանափակել 6 ոտնաչափ աշխատանքային տարածքով, ինչպես նաև՝ պահպանել գործընկերների միջև համապատասխան ֆիզիկական հեռավորությունը:

5. Անձը կարող է դիմակ չկրել, երբ դրսում միայնակ է կամ իրենց տան կամ բնակելի միավորի անդամի հետ, և նրանք ունեն դիմակ, որը տեսանելի է և անմիջապես պատրաստ՝ ծածկելու քիթը և բերանը (օրինակ՝ պարանոցի շուրջը կախված), և դրսում նրանցից բացի ոչ ոք (նրանց սեփական տան կամ բնակելի միավորի այլ անդամներից բացի) 30 ֆուտ (10 յարդ) հեռավորության սահմաններում չկա: Խորհուրդ է տրվում, որ նույն տան կամ բնակելի միավորի անդամները դրսում գտնվելիս դիմակ կրեն, նույնիսկ եթե մոտակայքում այլ անձինք չկան, քանի որ ցանկացած պահի մարդիկ կարող են հայտնվել՝ առանց նախազգուշացման: Տեղեկատվության համար՝ 30 ֆուտը մոտավորապես երկու մեքենայի երկարությունն է՝ մի ծայրից մյուսը: Երբ մարդիկ մոտենում են միմյանց և, հավանաբար, կհանդիպեն

առաջիկա վայրկյաններին, նրանք պետք է ծածկեն իրենց դեմքը դիմակով, երբ գտնվում են 30 ֆուտ հեռավորության վրա: 30 ֆուտի այս կանոնը կիրառվում է, երբ մարդիկ գտնվում են մայթերին, զբոսայգիներում, ճանապարհին կամ քայլուղիներում կամ որևէ այլ բացօթյա տարածքում, և քայլում են, վազում, հեծանիվ վարում, այլ վարժություններ կատարում, կանգնած են կամ մոտոցիկլ, սքեյթբորդ, մոպեդ կամ սկուտեր են վարում: 30 ֆուտ (10 յարդ) հեռավորությունն այստեղ օգտագործվում է՝ դիմակը դնելու համար մարդկանց բավարար ժամանակ տրամադրելու համար, նախքան հեռավորության կրճատվելը և միմյանց հետ վեց ֆուտի վրա գտնվելը, որը նրանց ավելի մեծ ռիսկի է ենթարկում՝ վիրուսի փոխանցման համար:

Քանի որ ավելի շատ գործողություններ են թույլատրվում այժմ, ապա ավելի շատ մարդիկ միմյանց մոտ կլինեն՝ առանց նախապես նախազգուշացման, և այդպիսով՝ դիմակ կրելն անհրաժեշտ է, երբ մարդիկ գտնվում են 30 ֆուտի վրա:

6. Անձը կարող է դիմակ չկրել, երբ (i) միայնակ է կամ միայն իրենց տան կամ բնակելի միավորի անդամների հետ, (ii) նրանք ուտում կամ խմում են՝ ներսում կամ կամ դրսում, և (iii) ուրիշ ոչ ոք չկա վեց ֆուտ հեռավորության վրա: Սննդի մատուցման, օրինակ՝ ռեստորանների պարագայում՝ անհրաժեշտ է հետևել նահանգի կողմից տրված ուղեցույցներին կամ առողջապահության պաշտոնակատարի առանձին կարգադրություններին կամ հրահանգներին, և մատուցողներից կարող է պահանջվել դիմակ կրել:

7. Հասարակական անվտանգության շտապ արձագանքման անձնակազմը պետք է կրի դիմակ՝ համաձայն Հիվանդությունների վերահսկման կենտրոնի ուղեցույցի և ըստ Գլենդել քաղաքի վարչական քաղաքականության:

C. Անկախ վերը թվարկված բացառությունների՝ դիմակ կրելը պահանջվում է հետևյալ դեպքերում.

1. Անձը պարտավոր է դիմակ կրել, երբ այդպես պահանջվում է այլ առողջապահության պաշտոնյայի հրամանով կամ հրահանգով, ներառյալ, երբ այլ հրամանի կամ հրահանգի պահանջը սույն հրամանից ավելի սահմանափակող է:

2. Անձը պետք է դիմակ կրի, երբ աշխատում է որևէ վայրում, որտեղ գործ ունի սննդի կամ այլ մթերքների հետ, դրանց պատրաստման կամ փաթեթավորման, վաճառքի կամ այլ անձանց մատակարարելու համար: Այս պահանջը չի կիրառվում անձի սեփական տան կամ բնակելի միավորի անդամների համար սնունդ կամ իրեր պատրաստելիս:

3. Ցանկացած հասարակական տրանսպորտի կամ տարափոխադրման միջոցի, տաքսիի կամ անձնական մեքենայի ծառայության կամ ճանապարհը կիսող մեքենայի վարորդը կամ օպերատորը պետք է կրի դիմակ, երբ վարում է, շահագործում է, կանգնած է կամ նստած է այդպիսի տրանսպորտային միջոցում, անկախ այն բանից, թե իրենից բացի այլ անձ կա այդտեղ, թե ոչ՝ տրանսպորտային միջոցներում շնչառական կաթիլների միջոցով վիրուսի տարածումը մշտապես նվազեցնելու անհրաժեշտության պատճառով: Սակայն հասարակական տրանսպորտի վարորդներին կամ օպերատորներին թույլատրվում է հանել դիմակը, երբ տերմինալներում են՝ օպերատորի խցիկում նստած, տրանսպորտային միջոցը կանգնած է, և ուղևորներ չկան՝ օպերատորների խցիկի ֆիզիկական տարանջատման և մաքրման արարողակարգերի պատճառով:

D. Սույն հրամանի նպատակն է ապահովել, որ բոլոր մարդիկ, ովքեր քաղաքում իրենց բնակավայրից դուրս են գտնվում, ինչպես թույլատրվում է «Տանն ավելի ապահով է» հրամանով, կրեն դիմակներ՝ նվազեցնելով այն հավանականությունը, որ նրանք կարող են փոխանցել կամ վարակվել COVID-19 վիրուսով: Այսպես վարվելով՝ այս հրամանը կօգնի նվազեցնել վիրուսի տարածումը և մեղմացնել դրա ազդեցությունը հասարակության անդամների և կարիք ունեցողների համար առողջության խիստ կարևոր ծառայությունների տրամադրման համար: Սույն հրամանի բոլոր դրույթները պետք է մեկնաբանվեն՝ այս նպատակն իրականացնելու համար:

E. Գործատուները պետք է թույլ տան, որ իրենց աշխատակիցներն առնվազն յուրաքանչյուր 30 րոպեն մեկ ձեռքերը լվանան: Բոլոր այս գործատուները պետք է իրենց հաշվին աշխատողների համար ապահովեն ոչ բժշկական դիմակներ: Բոլոր այս գործատուները պետք է ապահովեն, որ իրենց աշխատակիցները կարողանան օգտվել մաքուր, սանիտարական սանհանգույցներից, որոնք գործատուի հաշվին ապահովված են բոլոր անհրաժեշտ մաքրող կամ ախտահանող միջոցներով, որն անհրաժեշտ է Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության վարչության կողմից առաջարկված ձեռքի ախտահանման ընթացակարգերին հետևելու համար: Բոլոր այս գործատուները պետք է հաճախորդների, այցելուների և աշխատակիցների համար կիրառեն սոցիալական հեռավորության պահպանման միջոցառումներ՝ հնարավորության դեպքում յուրաքանչյուր անձի միջև ապահովելով վեց ոտնաչափ հեռավորություն: Բոլոր հաճախորդները և այցելուները պետք է կրեն քիթը և բերանը ծածկող պաշտպանիչ միջոցներ՝ աշխատողների և հաճախորդների համար լրացուցիչ պաշտպանություն ապահովելու համար: Բիզնեսի սեփականատերը կամ աշխատակիցը կարող է հրաժարվել ընդունել կամ ծառայություն մատուցել ցանկացած անձի, ով չի կրում դեմքը ծածկող պաշտպանիչ միջոց՝ ըստ այս Հրամանով նախատեսված կարգով: Բացի այդ, բոլոր մանրածախ բիզնեսներին խրախուսվում է տեղադրել պլեքսիգլաս ապակիներ՝ վաճառքի բոլոր

կետերում զանձապահներին և հաճախորդներին առանձնացնելու նպատակով:

F. Կորոնավիրուսից և COVID-19-ից պաշտպանվելու համար խաղաղապահ ոստիկանները կարող են օրինական կալանավորված անձանցից պահանջել դեմքը ծածկող հարմարանքներ կրել: Եթե անձը դեմքը ծածկող հարմարանք չունի, դրանք կտրամադրվեն ոստիկանների կողմից:

ԲԱԺԻՆ 2. Եթե սույն հանրային հրամանի կամ դրա կիրառման որևէ դրույթ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասության դատարանի կողմից, ապա այդ անվավերությունը չպետք է ազդի հրամանների կամ սույն որոշման այլ դրույթների, բաժինների կամ դիմումների վրա, որոնք կարող են ուժի մեջ մտնել առանց անվավեր դրույթի կամ դիմումի, և այդ նպատակով՝ յուրաքանչյուր արտահայտություն, բաժին, նախադասություն կամ բառ հայտարարվում է բաժանելի:

ԲԱԺԻՆ 3. Վերոնշյալ հանրային հրամանների ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

ԲԱԺԻՆ 4. Սույն որոշումը և համապատասխան կարգադրությունները չեն փոխարինում Լոս Անջելեսի վարչաշրջանի կամ Կալիֆորնիայի նահանգի կողմից սահմանված ավելի խիստ սահմանափակումներին:

Ընդունվել է Գլենդելի քաղաքային խորհրդի կողմից 2020 թվականի հունիսի 2-ին:

Քաղաքապետ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Քաղաքային խորհրդի քարտուղար

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ) SS.
ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔ)

Ես՝ Արամ Աճեմյանս՝ որպես Գլենդելի քաղաքային խորհրդի քարտուղար, սույնով հաստատում եմ, որ վերը նշված թիվ _____Որոշումն ընդունվել է Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքային խորհրդի կողմից՝ արտակարգ ժողովի նիստում, որը տեղի է ունեցել 2020 թվականի հունիսի 2-ին, և որ նույն որոշումն ընդունվեց հետևյալ քվեարկության արդյունքներով.

Կողմ՝ Բրոթման, Դիվայն, Քասախյան, Նաջարյան, Աղաջանյան
Դեմ՝ Չկա
Բացակա՝ Չկա
Ձեռնպահ՝ Չկա

Aram Adjemian
_____
Քաղաքային խորհրդի քարտուղար

ՈՐՊԵՍ ՁԵՎ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է
ԱՆՈՒՆ Michael J. Garcia
ՊԱՇՏՈՆ Քաղաքի դատախազ
ՍՏՈՐԱԳՐ. Michael J. Garcia
ԱՄՍԱԹԻՎ Հունիսի 3, 2020